ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

http://www.shirakcenter.sci.am

«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 2-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2022Թ.

ԳՅՈՒՄՐԻ



ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կ.Վ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
karineal@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1829թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Արփաչայի ափին գտնվող Գյումրի բնակավայրի ստրատեգիական նշանակությունը Ռուսաստանին համար առանձնապես մեծացավ: 1837թ. այստեղ այցելեց Նիկոլայ I կայսրը, որից հետո բնակավայրը ստացավ քաղաքի կարգավիճակ և վերանվանեց Ալեքսանդրապոլ: 1840 թ. Վրացա-իմերեթական նահանգի կազմում ստեղծվեց Ալեքսանդրապոլի գավառը:

19-րդ դարի առաջին քառորդից ռուս-թուրքական պատերազմներին հաջորդած վերաբնակեցումները նպաստեցին ինչպես գավառի բնակչության մեջ հայ տարրի զգալի ավելացմանը, այնպես էլ՝ ազգային կազմի որակական փոփոխմանը: Ի դեպ, հայերի հետ միասին այստեղ հաստատվեցին նաև մեծ թվով հույներ և ասորիներ:

Վերաբնակեցումների արդյունքում Ալեքսանդրապոլի գավառը դարձավ ոչ միայն հայահավաքման կենտրոն, այլև մի յուրահատուկ քուրա, որտեղ կոփվեց հայ քաղաքական միտքը, ձևավորվեց հայ մշակույթը, եռաց հասարակական–քաղաքական կյանքը: Ալեքսանդրապոլում մեծ թիվ էին կազմում արտասահմանում կրթություն ստացած գործիչները, ովքեր իրենց ձեռքը վերցրեցին քաղաքական կյանքի ղեկավարումը: Մասնավորապես, այստեղ ձևավորվեցին ազատագրական առաջին խմբակները, հետագայում ակտիվ գործունեություն ծավալեցին ազգային կուսակցությունները և այլն:

Պատահական չէ, որ ՀՀ կենտրոնական և Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանությունների միջև մշտապես առկա էին լուրջ հակասություններ: Հետագայում նույն խնդիրն առաջացավ խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման տարիներին: Այստեղ տեղի ունեցած հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքի այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք էին մայիսյան ապստամբությունը, համալսարանի բացումը, արևմտահայ գաղթականության խնամատարության կազմակերպումը, եղեռնից մազապուրծ հայության վերածնունդն ազդարարող սկաուտական շարժումը պայմանավորված էին գավառի բնակչության էթնիկ և մշակութային առանձնահատկություններով:

ԱՅՎԱԶՅԱՆ Է.Դ.
Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
emma.ayvazyan.94@gmail.com

ՏՈՀՄԻԿ ԶԻՆԱԳՈՐԾ ՉԻՖԹԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ ԶԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԸ ԸՍՏ ՀԱԹ-Ի «ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՑԱՂ-2» ՀԱՎԱՔԱԾՈՒԻ

Հայոց ազգագրության թանգարանի թանգարանային հավաքածուի մաս է կազմում տոհմիկ զինագործ վարպետներ Չիֆթալարյանների աշխատանքային արհեստանոցը, որը հիմնականում ձեռք է բերվել Ջավախք կատարված 1978թ., 1987թ., գիտարշավների ընթացքում: Թանգարանային առարկաները գերազանցապես ձեռք են բերվել նվիրատվությամբ, փոքր հատվածը՝ գնմամբ: Հավաքածուն ընդգրկում է շուրջ 2200 թանգարանային նմուշ՝ հրացանի փող մշակելու գործիքներ, մամլիչներ, դրոշմիչներ, փամփուշտի, կոտորակի կաղապարներ, զնդաններ, խարտոցներ, ատրճանակի ու հրացանի փողեր, նշանառության սանդղակներ և այլն: Հավաքածուն կարելի է բաժանել երկու մասի՝ ա) աշխատանքային գործիքներ ու առարկաներ, որոնք պատրաստել են Չիֆթալարյան զինագործ վարպետները և բ) գործարանային արտադրության իրեր: Երկու դեպքում էլ հավաքածուում կան իրենց նշանակությամբ և կարևորությամբ բացառիկ նմուշներ, որոնք կներկայացվեն սույն զեկուցման շրջանակներում: Մեր կողմից տրվել է հավաքածուի տիպաբանական բնութագիրը: Մինչդեռ այն ունի համակողմանի ուսումնասիրության և հանրահռչակման կարիք:

ԱՎԱԳՅԱՆ Ի.Է.
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
inga.avagyan.76@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԾ ՏՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՓԱԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ (ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ)

Հայաստանի ազգային արխիվում պահպանվում են Ալեքսանդրապոլի հասարակական կյանքին վերաբերվող հարյուրավոր փաստաթղթեր, որոնց թվում ուշագրավ տեղ է զբաղեցնում Նատալի Միլլերի հասարակած տանը վերաբերող փաստաթղթերի փաթեթը:

1898 թ. գավառապետի, ոստիկանապետի և ռազմական բժիշկների կողմից քաղաքացի Նատալի Միլլերին թույլ էր տրվել զինվորների սեռական կարիքները հոգալու համար Ալեքսանդրապոլի բնակիչ Կոսիևի տանը հասարակած տուն պահելու: Այդ կապակցությամբ շինությունը նույնիսկ վերանորոգվել էր: Երկու տարի գործելուց հետո՝ 1900 թ. հասարակած տունը Ալեքսանդրապոլի քաղաքային սանիտարա-վերահսկողա-

կան հանձնախմբի որոշմամբ փակվել էր: Այդ մասին որոշումը հաստատվել էր 1900թ. մայիսի 17-ին՝ Երևանի նահանգապետի կողմից:

Նատալի Միլլերը փորձել էր բողոքարկել նահանգապետի որոշումը և դիմել էր Ալեքսանդրապոլի նոր գավառապետին՝ դիմումի հետ կցելով նաև հասարակած տուն բացելու համար քաղաքային նախորդ իշխանություններից երկու տարի առաջ ստացած թույլտվությունը: Քաղաքցու դիմումը քննարկվել էր Ալեքսանդրապոլի քաղաքային սանիտարակատարողական հանձնախումբի կողմից և մերժվել: Հանձնախմբի կարծիքով Կոսիևի առանձնատունն իր հակասանիտարային վիճակով և անհարմար ու նեղ սենյակներով չէր համապատասպանում հասարակած տանը ներկայացվող պահանջներին: Իշխանությունները Միլլերից պահանջել էին երկշաբաթյա ժամանակահատվածում հասարակած տունը տեղափոխել ավելի հարմար մի վայր՝ քաղաքի ծայրամասում:

Այս գործի քննությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ հասարակած տներ ունեցող Ալեքսանդրապոլի քաղաքային դուման և ոստիկանության վարչությունը խստորեն հետևել են այս հաստատությունների սանիտարահիգիենիկ վիճակին և կանխել զանազան հիվանդությունների (այդ թվում նաև վեներական) տարածումը քաղաքում և հատկապես զորքերում: Մանավանդ, որ այս հաստատությունների հիմնական այցելուները քաղաքի կայազորում ծառայության մեջ գտվող զինվորականներն էին:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Մ.Ս.
Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
meryavetisyan1984@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՎՈՂ ՀԱՅԱՏԱՌ ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՄՈՒՇ

Մետաղի գեղարվեստական մշակության հետաքրքիր նմուշներ են եկեղեցական սպասքի պարագաները՝ սկիհները, մասնատուփերը, խնկամանները, բուրվառները, քշոցները, աշտանակները և այլն: Սպասքի համալիրի ենթախումբ հանդիսացող արարողակարգային սպասքի այս տիպը կիրառվում է եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ, որտեղ մարդը հնարավորություն է ունենում գործնականում ծանոթանալու եկեղեցական սպասքի կիրառական նշանակությանը, ինչը սահմանափակվում է հոգևոր կենցաղը սպասարկող գործառույթով:

Պատմական տարբեր անցքերի պատճառով, շատ հաճախ եկեղեցական սպասքի նմուշները հայտնվում են թանգարանային ցուցափեղկերում: Թանգարանային միջավայրում, ինչպես ցանկացած ցուցանմուշ, եկեղեցական սպասքը ևս, կորցնում է կենցաղում ունեցած իր առաջնային գործառույթը, և հանրությանը ներկայացվում որպես մշակութային արժեք: Դեռևս XIXդ. ձևավորված մշակութային արժեքներ հավաքելու, պահպանելու և ուսումնասիրելու թանգարանային գործի առաքելությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրողին արդեն թանգարանային նմուշ հանդիսացող եկեղեցական

սպասքը մեկնաբանել և հանրայնացնել տարբեր դիտանկյուններից՝ կախված ուսումնասիրողի և լսարանի նախասիրություններից։

Սույն զեկույցը փորձ է Հայաստանի որոշ թանգարաններում պահպանվող և ցուցադրվող եկեղեցական սպասքի նմուշների արհեստագործական եղանակների, արտաքին գեղազարդումների թեմատիկ քննության։ Ուսումնասիրության շրջանակներում հատկապես ընդգրկվել են հայատառ մակագրությամբ նմուշներ, որոնք առարկան դարձնում են առավել խոսուն։ Հետազոտության նպատակով Գյումրու պատմության, Գյումրու ճարտարապետության և քաղաքային կենցաղի, Շիրակի, Գեղարքունիքի և Դիլիջանի երկրագիտական, Երևան քաղաքի պատմության, Հայաստանի պատմության, Հայոց ազգագրության, Էջմիածնի պատմազգագրական և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ կատարած այցերը կապված թե՛ եկեղեցական սպասքի նմուշների, թե՛ դրանց ցուցադրական համալիրների հետ հետաքրքիր դիտարկումների առիթ հանդիսացան, որոնք կներկայացվեն զեկույցի շրջանակներում։

ԲԱԶԵՅԱՆ Կ.Ռ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
bazeyan60@yandex.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՇԻՐԱԿԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Շիրակի ավանդական կենդաղի ու մշակույթի ուսումնասիրության համար, ի թիվս բազմաբնույթ այլ սկզբնաղբյուրների, կարևոր են նաև բառարանները, որոնք բացի անունների զուտ թվարկումից նաև հետաքրքիր ազգագրական տեղեկություններ են պարունակում։ Այդ առումով հատկապես արժեքավոր են Աղ. Մխիթարյանցի և Ն. Նիկողոսյանի բառարանները, որտեղ ներկայացված են շիրակցիների տնտեսական զբաղմունքներին, աշխատանքային գործիքներին, նյութական մշակույթի բոլոր ոլորտներին՝ բնակարանին, հագուստին, ուտեստին, ինչպես նաև հավատալիքներին, տոներին ու ծեսերին, համայնական ու ընտանեկան կենցաղին վերաբերող եզրույթներ, դրանց բացատրություններ ու նկարագրություններ։

Զեկուցման մեջ անդրադառնալու ենք վերոհիշյալ բառարաններում ազգագրական նյութի վերլուծությանը։

ԲՈՅԱՋՅԱՆ Ա.Գ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի երկրագիտական թանգարան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
a.boyajyan@mail.ru

ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցի շրջանակներում կատարվում է 1990-2020թթ. Շիրակի և Լոռու մարզերի բնակչության բնական վերարտադրության ընդհանրական վերլուծություն: Առանձնակի կարևորվում է բնական վերարտադրության միտումների, տարածքային տարբերությունների բացահայտումը և առկա հիմնախնդիրների մատնանշումը:

ՀՀ մարզերի բնակչության բնական վերարտադրությունն ազգաբանական ուսումնասիրություններում ունի կարևոր գիտակիրառական նշանակություն: Ուսումնասիրելով երկու մարզերի բնակչության բնական վերարտադրության շարժընթացը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին, խնդիր ենք դրել պարզաբանել բնական վերարտադրության տարածքային առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները: Զեկույցի նպատակն է ներկայացնել բնակչության բնական վերարտադրության վրա ազդող գործոնները՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, մշակութային և այլն:

Քննության ընթացքում ուշադրություն ենք դարձրել քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության բնական վերարտադրության վրա: Ցույց ենք տվել երկու մարզերի բնակչության ծնելիության և մահացության միտումները, ինչպես նաև ամուսնությունների և ամուսնալուծությունների թիվն ինչպիսի ազդեցություն է ունեցել մարզերի քաղաքային և գյուղական բնակչության թվի փոփոխության վրա:

Հետազոտության համար նյութ են հանդիսացել բնակչության թվի փոփոխության բաղադրիչների՝ ծնելիության, մահացության և բնական աճի, ամուսնությունների և ամուսնալուծությունների պաշտոնական վիճակագրական ցուցանիշները:

ԴԱՎԻԴՈՎԱ Գ.Գ.
Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան galya.davidova.60@gmail.com

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Հայոց ազգագրության թանգարանի (այսուհետև՝ ՀԱԹ) «Հոգևոր մշակույթ» (ՀՄ) և «Թանկարժեք մետաղ» (ԹՄ) պահոցներում պահվում է 306 նվագարան՝ 223-ի ծագման վայրը հայտնի է: «Հոգևոր մշակույթ» պահոցում պահվում է 288 նվագարան, որոնցից 277-ը՝ հայկական, իսկ 16-ը՝ աշխարհի ժողովուրդների: «ԹՄ» պահոցում պահպանվում

է 2 նվագարան՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, դուդուկահար Լևոն Մադոյանի դուդուկը (փողը՝ երեսապատված ոսկյա թիթեղով, դուդուկին հագցված է ոսկյա մատանի՝ ագուցված թանկարժեք քարերով) և արծաթապատ զուռնա (Արցախ, 1848թ.): Այն պատկանել է Արցախում հայտնի զուռնահար Ղավալ Ասլանին (Ավետիսյան): Գործիքի վրա կա արձանագրություն. «Ասլանեան, Շինեց զարգեար Ս.» և աստղածաղկի ու կիսալուսնի ձևով փորագրություններ: «ՀՄ» պահոցում պահպանվում է երեք տիպի նվագարան. Լարային (102), փողային (156), հարկանային (33), որոնցից 22-ը՝ հարվածային, իսկ 11-ը՝ հարկանային-աղմկային: Թանգարանի նվագարանների հավաքածուի մեծ մասը ձեռք է բերվել XXդ. 80-ական թվականների կեսերին գիտարշավների, նվիրատվությունների, փոխանցումների և գնման միջոցով:

Հավաքածուում պահպանվում են հայտնի երաժիշտներ Սաշա Օգանեզաշվիլու (քամանչա), Գուրգեն Միրզոյանի (քամանչա), Լևոն Կարախանի (քամանչա), Լևոն Մադոյանի (դուդուկ), Վաչե Հովսեփյանի (դուդուկ), Սողոմոն Սեյրանյանի (թառ), Սողոմոն Ալթունյանի (ուդ), Վարդան Բունու (Բունիաթյան)՝ ալտ-քամանչա, քամանչա-թավջութակ և այլոց նվագարանները: Ժողովրդական գործիքների մեծ մասը պատրաստված են անվանի նվագարանագործ վարպետներ Սեփիկի, Իսաջանի, Ավետիքի, Հաջիի, Կիրակոսի, Մամիկոնյանի, Գրիգոր և Հովհաննես Փափազյանների, Արամ և Հովհաննես Չաթրջյանների, Ալբերտ Զաքարյանի, Ռուբեն Ռուշանյանի, Գևորգ Գևորգյանի, Հայկ Երիցյանի, Տիգրան Մարգարյանի, Շահեն Երիցյանի և այլոց կողմից:

Ոչ նյութական մշակույթի բարձրարժեք ձեռքբերումներից են հայոց բազմադարյան երաժշտարվեստի պատմության վկաները՝ նվագարաններ, որոնց հնագույն տարբերակները պատկերված են ժայռապատկերների, բրոնզեդարյան շրջանի արձանիկների, ռիտոնների և տապանաքարերի վրա: Հազարամյակների պատմություն ունեցող մանրանկարչության գեղագիր էջերում պահպանված են նվագարանների ուշագրավ պատկերներ: Թանգարանի հավաքածուի ամենահին նվագարանները 1689 և 1696 թթ. թվագրվող պղնձե ծնծղաներն են՝ հայատառ արձանագրությամբ. «ՅՇԱՏԿԷ ԱՂԹԱՍԻԳԱ Զ ՊԱՐԻՆՈՐՏԻ ԴՈՒՌՆ ԽԱԻՅԱՅ ՍԲ ՍԱՐԳԻՍ ԶԻՆԱՐՈՐԻՆ ՏԷԻՆ. ՌՃԼԸ» (1689) և «ՅԸ ՏԿԷ ՈՐԴ ԿՄԱԵԾԻՆ ՄԱՍՈՍ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԳՐԻԳՈՐԻ ԹՎ ՌՃԽԴ» (1696):

Զեկույցի նպատակն է ներկայացնել այն նվագարանները, որոնց մեղեդիները հոգեհարազատ են հային, ներդաշնակ նրա հույզերին ու խառնվածքին: Նվագարաններից որոշները կենցաղավարվում են մինչ օրս և ինչ-որ տեղ դարձել են մերը՝ ազգայինը, թե՛ տխրության, թե՛ ուրախության ժամանակ:

ԹՈՔՄԱՋՅԱՆ Հ.Հ.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
hrazdantok@hotmail. com

ԹՈՔՄԱՋՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՁՈՒԼԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

1830-ական թվականներից սկսած Աղաջանյան-Թոքմաջյան ընտանիքն իր մասնակցությունն է ունեցել Գյումրիի արհեստագործության մեջ: Սկսած Կարինից գաղթած

Աղաջանից մինչև ընտանիքի վերջին ձուլագործ Հենրիկ Թոքմաջյանը (մահ. 2018թ.), պահպանվել են հետաքրքրական տվյալներ, փաստաթղթեր, լուսանկարներ, գործիքներ, ձուլածո առարկաներ և այլն:

Մեր կարծիքով Գյումրիում մետաղամշակության մակարդակը առավել ամբողջական պատկերացնելու տեսակետից կարևոր է այս ընտանիքի գործունեությանը վերաբերող նյութերին ծանոթանալը:

Բանավոր ավանդությամբ փոխանցված պատմություններից բացի, ցուցադրության համար հավաքված և ներկայացնելու համար նախատեսված նյութեր ևս կան: Հուսով ենք, որ մեր զեկույցը կնպաստի Գյումրիում հավաքորդների մոտ պահվող և Թոքմաջյաններին վերաբերող այլազան նյութերի իհայտ գալուն:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ.Պ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
vard-rosa@mail.ru

ՇԻՐԱԿԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակցու կենսախինդ ոգին, որ նրա ներկայանալի բրենդն է, պատմամշակութային ճանապարհ է անցել: Հումորն ու երգիծանքը մշակութային բաղադրիչներ են, որոնցում արտահայտվում են առհասարակ շիրակցիների աշխարհընկալման լավատեսությունն ու կենսափիլիսոփայությունը: Աշխարհը պայծառացնող զվարթախոհությունը ստեղծում է նաև լեզվական համարժեք: Այսօր էլ այն կրում, պահում-պահպանում է նոր սերունդը:

Շիրակցու հումորը նաև դիմադարձություն է. հումոր անողն իր զգացողությունների մեջ երբեմն դրսևորում է աշխարհի կառուցվածքը բարեփոխելու միտում: Շիրակցին ոչ թե խոսում է հումորի մասին, այլ ապրում է հումորը, ինքնաբուխ հորդում է հումորը՝ որպես գոյաբանական վիճակի արտահայտություն: Նրա հումորը այլախոսիկ է, գաղտնագրված. բողոքը, ըմբոստությունն ու սերը հումորի «փամփուշտով» են: Շիրակցուն բնորոշ է գրոտեսկային, երբեմն ինքնաոչնչացնող հումորը:

Երկրաշարժից հետո ստեղծված հումորային տեքստերն առավելապես սոցիալական բողոք էին, վիշտը գաղտնագրելու հնարանք /«Ժաշկից առաջ տունն էինք մնացել, ժաշկից հետո դուրսը մնացինք»,-Գյումրու բնակչուհիներից մեկի խոսքը/: Փլատակների տակ մնացած մարդիկ անգամ հումորով էին վերաբերվում ստեղծված էքստրեմալ իրավիճակին:

Լացող քաղաքը ժամանակի ափի մեջ բարձրացավ ինքն իրենից և ծիծաղով հաղթեց մեծ փորձությանը՝ մինչև իսկ մեծ վշտի մեջ չկորցնելով կենսասիրությունը:

Եթե անեկդոտներն ու մանրապատումները ծնունդ էին առնում իրականությունից եկող տպավորություններից, այս կամ այն արատավոր երևույթը ծաղրելու անհրաժեշտությունից, սրամիտ խոսքն այստեղ ծնունդ էր առնում մեծ կենսաճանաչողությունից, ի

բնե շիրակցուն հատուկ շրջահայացությունից, փիլիսոփայելու բնածին հակումներից: Գյումրեցիների սրամիտ խոսքերն ունեն իրենց բնավայրային բնավորությունը, տիպը, տեսակը, ծագումնաբանությունը, անգամ կառուցման մեթոդաբանությունը: Եթե հայկական շատ բնակավայրերում անեկդոտի առանցքում ծիծաղելի ինտրիգն է դառնում առաջնայինը, ապա Գյումրու անեկդոտներում «հերոսների» բնավորություններն ու վարքագծերն են իրենց վրա առնում սյուժեի զարգացումը: Սրամտություններն ու սրախոսություններն այստեղ երբեմն ձեռք են բերում աֆորիզմային արժեք, խտացվածություն ու իմաստ:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Լ.Ս.
Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
mnatsakanyan.lusine@mail.ru

ՍԻՐԱՄԱՐԳԻ ՊԱՏԿԵՐԸ ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳԵՂԱՀԱՐԴԱՐԱՆՔՈՒՄ ԸՍՏ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ

Սիրամարգը յուրահատուկ գեղեցկությամբ թռչուն է և դարեր շարունակ զբաղեցրել է առաջին տեղ աշխարհի ամենագեղեցիկ թռչունների շարքում: Դրա հետ կապված են բազմաթիվ առասպելներ և լեգենդներ, ասացվածքներ ու սնահավատություններ: Որոշ ժողովուրդներ աստվածացրել են դրախտային թռչունին, մյուսները նրան վերագրել կախարդություն:

Սիրամարգները զարդարել են Հին Եգիպտոսի, Հռոմի և Հնդկաստանի տիրակալների պալատները:

Վաղ քրիստոնեության մեջ սիրամարգի կերպարը կապված էր արևի սիմվոլի հետ և ընկալվում էր որպես անմահության և անապական հոգու գեղեցկության խորհրդանիշ:

Այս թռչունների մասին առաջին հիշատակումը կարելի է գտնել ինչպես հին մագաղաթներում, այնպես էլ Աստվածաշնչում:

Քրիստոնեական ավանդույթում սիրամարգի «աչքերը» երբեմն խորհրդանշում են «ամենատես» Եկեղեցին: Քանի որ այս թռչունը պարբերաբար թարմացնում է իր փետուրը, այն դարձել է անմահության, ինչպես նաև հարության խորհրդանիշ:

Սիրամարգի պատկերը հնագույն ժամանակներից սկսած իր հետքն է թողել ինչպես նյութական մշակույթի, այնպես էլ ոչ նյութական մշակույթի՝ ժողովրդական բանահյուսության և դիցաբանության մեջ, գրականության, երաժշտության և վերջին շրջանում՝ մուլտֆիլմերի մեջ:

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել սիրամարգի կերպարը Հայոց ազգագրության թանգարանում պահպանվող թռչնի պատկերով գեղազարդված մի շարք թանգարանային առարկաների օրինակով:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս.Հ.
Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Պատմական գիտությունների թեկնածու
sv_ethnomuseum@yahoo.com

ՍՈՒՐՃԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Սուրճի տարածման գործում հայերը լուրջ դերակատարում են ունեցել: Սուրճը խորհրդահայ քաղաքային միջավայր ըստ էության բերել են հայրենադարձները 1920-1930-ական թվականներին, թեև այդ գործում որոշակի դերակատարություն ուներ նաև կուսակցական վերնախավը: 1920-ական թվականներին, հատկապես 1930-ականներին Հայաստան եկած ֆրանսահայերն իրենց հետ սուրճ էին բերել, բայց այն բնակչության փոքր շրջան գրավեց՝ մշակույթը կրողների սահմանափակ շրջանակի պատճառով:

Տեղացիների կողմից «սև ջուր» անվանված ըմպելիքը նորեկ կանայք և տղամարդիկ խմել են ամեն օր և դա սուրճի հյուրասիրության կարևոր տարրերից է եղել: Տեղացիները սկզբնական շրջանում բավականին կտրուկ մերժել են սուրճի կիրառումը: Դժվար էր պատկերացնել, որ ընդամենը մի քանի տասնամյակ անց սուրճը՝ որպես ամենատարածված և հարգի ըմպելիք, կտարածվի տեղացիների մշակույթում: Սուրճ խմելու տարածմանը նպաստել է սուրճի մրուրով գուշակելու կանանց իրական կամ թվացյալ հմտությունը: Սրճախմության տարածմանը նպաստել է նաև այն, որ այդ ըմպելիքին վերագրվել է բուժական նշանակություն:

Սև սուրճի կիրառությունը Հայաստանում լայն տարածում ստացավ 1950-1960-ական թվականներից հետո, սկզբնապես Երևանում, իսկ 1970-1980-ական թվականներին նաև մյուս քաղաքներում և գյուղական վայրերում: Այն սկզբնական շրջանում հասանելի էր հասարակության ունևոր շերտերին՝ որպես վերնախավի մենաշնորհ, հետո դարձել է բոհեմի խորհրդանիշ: Բավական ժամանակ անց սուրճը որպես ամենօրյա կիրառության ըմպելիք գրավել է շատերին և դարձել համընդհանուր օգտագործման ու ընդունվել որպես հյուրասիրության կարևոր բաղկացուցիչ:

ՍԱՀԱԿՅԱՆ Կ.Ա.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
sahakyanani@mail.ru

ՀՈՒՄՈՐՆ ՈՒ ԵՐԳԻԾԱՆՔԸ ԳՅՈՒՄՐԻ-ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Շիրակի երգիծական բանահյուսությունն առավելապես արտահայտվում է բանավոր երգաստեղծության ժանրերում՝ տեղական զրույցներ, անեկդոտներ, ժողովրդական խաղիկներ, կշտամբանքի խոսքեր, մականուններ, առած-ասացվածքներ և այլն:

Շիրակի մարզում բանահյուսական տեքստը գերազանցապես դրսևորվում է ծեսի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերի ընդգրկմամբ: Շիրակի երգիծական բանահյուսության նմուշների քննությամբ կարելի է հավաստել, որ ստեղծարար քաղաքն իր հոգևոր ծննդաբանության մեջ ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի երգիծական բանահյուսությունն ու հումորը:

Շիրակի երգիծական բանահյուսության նմուշներում առկա են հանկարծաստեղծության տարրը, ինքնաստեղծման տաղանդը: Գյումրին հայտնի էր իր կատակաբան-զվարճախոսներով՝ Պոլոզ Մուկուչ, Ծիտրո Ալեք, Չոփուռ Սուրեն, Ջղեր Խաչիկ և այլք: Ըստ էության՝ մականուններն ու տեղական զրույցները քաղաքի կենդանի մատյաններն են՝ խտացված հումորով՝ Անարժան հարուստենք, Պատռած մանեթենք, Էշ Մանուկենք, Տկլոզենք, Բոբլիկենք, Քյալ Դավիթենց Հովհաննես, Ագենտ Վաղարշակ, Բաթում Մարտիրոս...:

Հորինումի տարերքով բռնված՝ նույն զրույցն ու անեկդոտը գյումրեցիները ամեն անգամ կարող են պատմել նոր տարբերակով, այդպես ժողովրդական բանահյուսության կարևոր հատկանիշներից մեկը՝ ստեղծագործական հարստացումը, դարձնելով շարունակական: Չափազանցություններն ու խոսքի ուռճացումը, ինքն իր շուրջ անեկդոտային միջավայր ու զրույց հյուսելը մնում են շիրակցու/գյումրեցու նախասիրությունների դաշտում: Նա խոսքը կառուցում է այնպես, որ տեքստը նույնիսկ իր համար անսպասելի է: Փոքր սյուժեի մեջ անգամ գտնում է զարմանալին՝ թվացյալ աննշան իրողությունները դարձնելով «մազալու բան»: Շիրակցու հանկարծաստեղծ տեքստերում շարունակ բացահայտվում է նրա մտքի տարածությունը: Այստեղ անեկդոտն ու զվարճախոսությունը գիրկընդխառն են, նրանց սյուժեներում թիրախը երբեք հիմարությունը չէ, այլ խելացի խորամանկությունը, մտքի ճարպկությունը՝ խորքում միշտ մնալով ազնիվ: